ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ ՀԳԴ-2-20

ք. Երևան «29» ապրիլի 2020թ.

ՀՀ դատախազությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հ Նավասարդյանի, որը գործում է ՀՀ դատախազության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Հովհաննիսյանի, որը գործում է «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին, այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **թարգմանչական** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան՝ սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող կամ անպատշաճ որակի Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելու հետևանքով պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուին ներկայացված՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ համաձայնագիր-ակտի (այսուհետ՝ Համաձայնագիր-ակտ) հիման վրա: Ձեկուցագիրը ներկայացվում է Պատվիրատուի կողմից՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 3 հավելվածով սահմանված Համաձայնագիր-ակտի ներկայացումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում: Ձեկուցագիրը կազմվում է տվյալ կազմակերպության կողմից տրված՝ մատուցված ծառայությունների ծավալի (թարգմանված՝ էջերի, նիշերի, թարգմանության՝ ժամերի, բոպեների պարտադիր նշումով) վերաբերյալ Համաձայնագիր-ակտի հիման վրա:

Ձեկուցագրում նշվում են ծառայություններ մատուցած անձի անունը, ազգանունը, ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում), ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանված էջերի թիվը, իրավասու մարմնի՝ դատախազության անվանումն ու այն վարույթի անվանումը, որում անձը ներգրավվել է ծառայությունների մատուցման նպատակով:

Ձեկուցագրին կցվում են դատախազության, թարգմանչի, տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի և վարույթի մասնակիցների փոխադարձ համաձայնությունը՝ Համաձայնագիր-ակտը, որը ներկայացվում է Կատարողի կողմից Պատվիրատուին՝ Ծառայության մատուցման ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Պատվիրատուի կողմից Ձեկուցագիրը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Ձեկուցագիրը ստորագրվում է նաև Կատարողի կողմից: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Ձեկուցագիրը չի ստորագրվում և այդ մասին անհապաղ տեղյակ է պահում Պատվիրատուն, ով՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.3 Եթե պայմանագրի 3.1 կետում սահմանված ժամկետի ավարտից հետո Պատվիրատուն չի ստորագրում սույն կետի պահանջներին համապատասխան Ձեկուցագիրը, չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա ծառայությունը համարվում է ընդունված:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության **առավելագույն** գինը կազմում է **2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.1.1 Յուրաքանչյուր թարգմանության համար վճարվելիք գումարի կոնկրետ չափը որոշվում է ՀՀ դատախազության, թարգմանչի, տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի և վարույթի մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ և չի կարող գերազանցել սույն պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված տվյալ ծառայության մատուցման համար նախատեսված գնի առավելագույն չափը:

4.1.2 Եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը պակաս է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա Պատվիրատուն վճարում է միայն փաստացի մատուցված ծառայությանը համարժեք չափով, իսկ եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը ավել է Պատվիրատուի կողմից

որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա այդ մասով վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ հարցը կարգավորվում է Կողմերի միջև կնքվող համաձայնագրով, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողի և Կատարողի հաստատած Ձեկուցագրի հիման վրա (եթե Ձեկուցագիրը Պատվիրատուն ստանում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ծառայության դիմաց վճարելու համար միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Պահմանագիրը գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձնանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է -8- էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.6 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրվոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ դատախազություն	«ԿՐԹԱՐԱՆ ՍՈՆԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 68/28
ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.	Հ/Հ 11813000406200
Հ/Հ 900011180081	«Այ Դի Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02506634	ՀՎՀՀ 00106337
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«29» ապրիլի 2020թ. կնքված
Թիվ ՀԳԴ-2-20 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա-բաժնի համարը	տեխնիկական բնութագիրը			չափման միավոր	միավորի գին	չափման միավոր	միավորի գին	ընդհա-նուր գինը	մատուցման ժամկետը
				1էջ		1ժ			Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 30. 12. 2020թ.
1	Հայերեն	Ռուսերեն	Հայերեն	1	1000			2000000	
2	Հայերեն	Անգլերեն	Հայերեն	1	1300				
3	Հայերեն	Պարսկերեն	Հայերեն	1	1800				
4	Հայերեն	Ֆրանսերեն	Հայերեն	1	1990				
5	Հայերեն	Գերմաներեն	Հայերեն	1	1990				
6	Հայերեն	Իսպաներեն	Հայերեն	1	1990				
8	Հայերեն	Թուրքերեն	Հայերեն	1	1990				
9	Հայերեն	Վրացերեն	Հայերեն	1	1800				
10	Հայերեն	Հունարեն	Հայերեն	1	1990				
12	Հայերեն	Լեհերեն	Հայերեն	1	1990				
13	Հայերեն	Արաբերեն	Հայերեն	1	1800				
21	Հայերեն	Ճապոներեն	Հայերեն			1	2000		
43	Հայերեն	Ուրդու	Հայերեն	1	2000				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԿՐԹԱՐԱՆ ՍՈՆԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 68/28
Հ/Հ 11813000406200
«Այ Դի Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00106337

(ստորագրություն)

Կ.Տ.

Լրացուցիչ պահանջներ՝

1. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում Կատարողը Պատվիրատուին է տրամադրում նաև թարգմանված նյութի էլեկտրոնային տարբերակը:

2 Թարգմանվող և թարգմանված նյութերը պետք է տրամադվեն՝ 1-4 էջը՝ 1, 5-10 էջը՝ 2, 11-25 էջը՝ 3, 25 էջից ավելը՝ 4 օր ժամկետներում, եթե Պատվիրատուի կողմից այլ ժամկետ սահմանված չէ, 2 օրինակից, Պատվիրատուի կողմից սահմանված վայրերում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նյութերը տեղում կարվում է բնօրինակների հետ:

3. Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով, էջերի լուսանցքները՝ վերևից՝ 20մմ, ներքևից՝ 20մմ, աջից՝ 10մմ և ձախից՝ 30մմ, միջտողային միջակայքը՝ 1.5:

4. Եթե թարգմանության կամ այլ ծառայության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի, եթե թարգմանության մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է կես էջը, բայց պակասում է մեկ էջից, ապա այն հավասարեցվում է մեկ էջի, իսկ եթե թարգմանության մի հատվածը պակաս է կես էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես էջի:

Հավելված 2
«29» ապրիլի 2020թ. կնքված
Թիվ ՀԳԴ-2-20 պայմանագրի

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ N
ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատու՝ _____
Կատարող՝ _____
Դատախազության անվանումը _____
Վարույթի անվանումը՝ _____
Ձեկուցագիր ներկայացնող՝ _____
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների					
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը	կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը
			ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանված էջերի թիվը	ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում),		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ Համաձայնագիր-ակտը և բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն Ձեկուցագրի բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծանոթացա, համաձայն եմ

Կատարող՝ _____

Հավելված 3
«29» ապրիլի 2020թ. կնքված
Թիվ ՀԳԴ-2-20 պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ-ԱԿՏ N

(Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին վճարվելիք գումարի չափի վերաբերյալ)

_____

(վարույթն իրականացնող մարմի անվանումը)

_____

(վարույթի անվանումը)

_____

(թարգմանչի Ա. Ա. Հ.), (տեսողական սահմանափակումների պատճառով
հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի Ա. Ա. Հ.)

_____

Համաձայնություն ձեռք բերեցին առ այն, որ 20 թ. _____-ին կնքված N____ պայմանագրի շրջանակներում մատուցվել է ___ էջ/ ___ ժամ թարգմանություն, մատուցված ծառայությունների դիմաց Կատարողին (*ծառայություններ մատուցող անձ*) ենթակա է վճարման 1 (մեկ) էջի / 1 (մեկ) ժամի համար՝ _____ ՀՀ դրամ գումար:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ՝

_____

ազգանուն, անուն

_____

ազգանուն, անուն

_____

ազգանուն, անուն

_____

ազգանուն, անուն